ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՇՏԱՐԱԿԻ Ն. ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Ինֆորմատիկա

Ուսուցիչ՝ Անագիտ Գրիգորյան

Թեմա՝ Տեղեկատվական գլոբալ ցանցերը, տեղեկատվության անվտանգությունը և սովորողի հոգեկան առողջության պահպանումը

Ղեկավար՝ Վարդանուշ Հովհաննիսյան

ԱՇՏԱՐԱԿ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համացանցից օգտվում են աշխարհի բնակչության ավելի քան մեկ քառորդը, շուրջ 1,5 միլիարդ մարդ՝ տարբեր սեռի և տարիքի և այդ թիվը շարունակում է աճել:

Մեզնից շատերն իրենց կյանքն այսօր ուղղակի չեն պատկերացնում առանց համացանցի: Ոչ հեռավոր անցյալում համացանցը էկզոտիկա էր, ոչ բոլորին հասանելի: Ավելի ճիշտ կլինի ասել, որ այն պարզապես քչերին էր հասանելի: Ավելին, այն ոչ միայն քչերին էր հասանելի, այլև բավական սահմանափակ էր ու շատ հնարավորություններ չէր տալիս: Իսկ այսօր համանցանցը իր ցանցն է գցել ու տարածվել ողջ երկրագնդով՝ աստիճանաբար առաջարկելով նորանոր հնարավորություններ ու նորանոր գործիքներ: Այսօր դժվար է պատկերացնել, որ համացանցի նախատիպը, որը գործարկվել է 1969 թ.-ին, իր առջև դրել էր ընդամենը մեկ խնդիր՝ կազմակերպել տեքստային տվյալների փոխանցում երկրի մի կետից մյուսը: Համացանցում գործում են բազում ծառայություններ, որոնք ճիշտ կիրառելիս այն դարձնում են անփոխարինելի գործիք:

Արագագործ համացանցը հասանելի է դարձնում հեռուստատեսային ծառայություններ, ֆիլմերի, տեսահոլովակների, այլ տեսանյութերի դիտումներ: Համացանցը օգտագործողներին իրական ժամանակում հաղորդակցվելու հնարավորություն է տալիս, ինչպես գրավոր տեսքով, այնպես էլ ձայնային ու տեսաձայնային տարբերակով՝ նույն պահին լսելով և տեսնելով զրուցակցին: Էլեկտրոնային փոստն արդեն գրեթե ամբողջովին փոխարինել է սովորական փոստային ծառայությանը: Համացանցային ծառայությունները հնարավորություն են տալիս աշխարհի տարբեր ծայրերում գտնվող համակարգիչների միջև ֆայլերի փոխանակություն իրականացնել: Համացանցը նաև ժամանցի մի հսկայական տարածք է, որտեղ կարելի է գտնել առցանց (online) խաղեր, մրցույթներ, վիկտորինաներ: Սոցիալական ցանցերը, ֆորումները, բլոգները հնարավորություն են տալիս վերագտնել հին ծանոթներին, ձեռք բերել նույն հետաքրքրություններն ունեցող նոր ծանոթներ, ստանալ հուզող հարցերի պատասխանները և այլն:

Սրանք միայն մի փոքր մասն են այն ոլորտների, որտեղ համացանցի շնորհիվ արմատապես փոխվել են մարդկանց ապրելու, շփվելու, սովորելու, աշխատելու և

հանգստանալու ձևն ու հնարավորությունները: Համացանցային ծառայությունները և տեխնոլոգիաները ներառվել են մարդկային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:

Մտահոգիչ է նաև այն, որ շատ ծնողներ ավելի քիչ են տեղեկացված նման խնդիրներից, քան՝ երեխաները: Վտանգների հանդիպելու ռիսկն ավելանում է, երբ երեխաները համացանց մուտք են գործում սմարթֆոնի, պլանշետի կամ այլ սարքերի միջոցով: Այսպես ավելի քիչ է հավանականությունը, որ վերահսկվում են ծնողների կամ դպրոցի, մանկավարժների կողմից:

ՆՊԱՏԱԿԸ

Սովորողներին իրազեկել, թե ինչպես ապահով և արդյունավետ օգտագործել համացանցի հնարավորությունները, ինչպես ճիշտ կողմնորոշվել համացանցում՝ չդառնալով խաբեության զոհ, ինչպես պաշտպանել համակարգիչը վիրուսներից, ինչպես դրսևորել օրինակելի վարք առցանց շփման ժամանակ: Պարզել, թե որոնք են համացանցից ներթափանցող հիմնական վտանգները:

Խնդիրները

- ՈՒսումնասիրել համացանցում մեդիագրագիտության վերաբերյալ հայալեզուպաշարները:
- Մշակել դասի պլան, կանոներ, քարտեր, տեսական նյութ:
- Իրականացնել դաս, ծնողական ժողով, անդրադառնալ համացանցի անվտանգության թեմային, անցկացնել գործնական աշխատանքներ, դասախոսություններ:
- Կատարել անրադարձ:

Մեթոդ

- գիտական և մեթոդական գրականության տեսական վերլուծություն
- տեղեկատվության ընտրություն
- ընդհանրացում:
- նկարագրություն.

ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՑԱՆՑԸ

Համացանցը զարգանում է օրեցօր: Օրեցօր ավելանում են թե՛ նրա հնարավորությունները, թե՛, այդ թվում, նրա բերած վտանգները: Սա նոր զարգացող աշխարհ է, նոր ստեղծվող միջավայր, նոր ստեղծվող մշակույթ: Եվ եթե մեզնից որևէ մեկն ուզում է իրեն լիարժեք մարդ զգալ այս նոր միջավայրում, պետք է մատն ամբողջ ժամանակ պահի զարկերակին, զգա փոփոխություններն ու հարմարվի: Իսկ էլ ավելի կարևոր է, որ այդ ընթացքում լրիվ չտարվի համացանցով՝ վերանալով իրական աշխարհից, իրական շփումներից:

Երեխաների համար համացանցը և այն սարքերը, որոնցով նրանք միանում են համացանցին, իրականում նրանց իրական կյանքի մասն են: Երբ երեխաների հետ խոսում ենք համացանցի և նոր տեխնոլոգիաների մասին, անհրաժեշտ է պահպանել լավատեսական և դրական տրամադրություն: Մենք պետք է նպատակ դնենք երեխաներին տեղեկացնելու համացանցի վտանգների մասին և, թե ինչպես հաղթահարել դրանք:

Ամենահաս համացանցի և սոցցանցերի ազդեցության տակ երեխաները դառնում են ուրիշ, ոչ այնպիսին, ինչպիսին կուզենային նրանց տեսնել ծնողները: Ոչ ինտերնետային անցյալ ունեցող ծնողներին թվում է, որ համացանցը կլանում է իրենց երեխաներին ճահճի պես: Չնայած այդ վիրտուալ ճահճում թաքնված են լավ և վատ կողմեր:

Նաև պետք է հիշել, որ համացանցը լոկ սոցցանցերը չեն, իսկ «մեծահասակների կայքերից» երեխաներին հեռու պահելու համար դրանք փակելու տեխնիկական հնարավորություններ գոյություն ունեն: Համակարգիչը պետք է երեխայի օրվա ռեժիմի մի մասը լինի, բայց երբեք չպետք է հասցնել պատժի սահմանին՝ հակառակ հոգեբանական ռեակցիա չառաջացնելու համար: Սխալ է երեխային համացանցից ընդհանրապես զրկելը, քանի որ այն լայն ճանաչողական, ուսուցողական, գեղեցիկի հետ շփվելու հնարավորություն է տալիս, դրանովաշխարհը ավելի փոքր և ընկալելի է դառնում երեխայի համար: Ըստ հոգեբանի, ոչինչ արգելել չի կարելի, երեխայի հետ պետք է անընդհատ երկխոսության մեջ լինել, և փորձել բացատրել համակարգչի և համացանցի օգուտներն ու վնասները: Երբ երեխայի և ծնողի միջև կա դիալոգ, ապա այդ դեպքում շատ հեշտ է երեխային հասցնել նրան, որ ինքը գիտակցի, որ դա վնասակար է:

Համացանցի լավ կողմերն են՝

Դեպի հաջողության տանող ճանապարհ է

Վաղ տարիքից, ուզած թե չուզած, յուրացնում են այդ տեխնոլոգիաները ու հաղորդակցության մյուս միջոցները: Հասունության վկայական դեռ չստացած նրանք տեխնոլոգիաների պատրաստի մասնագետներ են:

Շփման հնարավորությունների շրջանակը մեծ է

Հին կապերն ամրապնդվում են, առաջանում են նորերը, երբեմն աշխարհի մյուս ծայրից: «Կյանքը» հետաքրքիր է դառնում: Հանդիպման վայրը հետայսու նույնն է՝ ՀԱՄԱՑԱՆՑ:

Ինքնարտահայտման միջոց է՝

Հատկապես աճող սերնդի համար ի հայտ է եկել սեփական կարծիքը հայտնելու, դրանով ուրիշների հետ կիսվելու հնարավորություն:

Գիտելիքների հզոր աղբյուր է

Այսօր ավելի հեշտ է գիտելիքներ ձեռք բերել համացանցի միջոցով:

Որոշակի ճաշակ կարող է ձևավորել

Երեխան համացանցի միջոցով կարող է այցելել թանգարաններ ու պատկերասրահներ:

Համացանցի վատ կողմերն են՝

Սպառնալիք է

Սոցցանցերի միջոցով իրար սպառնալ, վախեցնել,հաճախ սպառնալիք ստացածները կարողեն թողնել դպրոցը, կամ դիմել որևէ այլ վատ քայլի:

Լեզվական սահմանափակումներ

Սոցցանցերում շատ են գրում հաղորդագրություններ, որոնք գրում են կրճատ կամ սմայլիկներով: Լեզվական, այդ թվում նաև երեխայի զարգացման մշակութային հիմքերն այսպիսով վտանգվածեն:

1. Անընդհատ սոցիալական կայքերի, անձնական և էլփոստը ստուգելու ցանկությունը:
2. Համակարգչի մոտ լավ ինքնազգացողությունը, իսկ համակարգչից հեռու գտնվելու ժամանակ դատարկության, դեպրեսիայի, լարվածության զգացողությունը:
3. Համակարգչից կտրվելու անընդունակությունը:

4. Աշխատանքի կամ ուսման հետ խնդիրների առաջացումը:

5. Ձերքի մկանների գերլարվածության հետևանքով ցավի զգացողությունը:

6. Չորություն աչքերում:

7. Միգրենանման գլխացավեր:

8. Մեջքացավեր:

9. Անկանոն սնվելը:

10. Քնի խանգարումները:

Հիմա փորձեմ պատասխանել հետևյալ հարցին. «Ի՞նչպես պայքարել բացասական հետևանքների դեմ»:

Ներկայումս հանրակրթական բոլոր դպրոցները ապահովված են անվճար համացանցով: Հատուկ «զտիչները» թույլ չեն տալիս մտնելու ցանկացած ուսումնական կայք: Սա այն ճանապարհներից մեկն է, երբ պետությունը կարող է պայքարել համացանցի բացասական հետևանքների դեմ: Կարելի է նաև տարիքային սահմանափակում կիրառել: Օգտագործիր համացանցը կարիքներիդ համար, բայց այն մի սարքիր քո բնակավայր: Համացանցը միայն օժանդակ գործիք է: Համացանցը միայն օգտագործելու համար է: Մի՛ թույլատրիր, որ համացանցը քեզ օգտագործի:

Համացանցում ձեզ կարող են սպառնալ, վիրավորել, հրավիրել հանդիպման: Հաճախ դրանք դատարկ խոսքեր, բայց ի՞նչ գիտեք, թե ով է թաքնված այդ համացանցի այն կողմում: Իսկ համացանցի այն կողմում կարող է լինել հանցագործ, կարող է լինել մոլագար: Մշտապես խուսափեք համացանցային հարաբերությունները, վեճերը իրական կյանք բերելուց: Խուսափեք կոնֆլիկտներից: Եթե ինչ-որ մեկը ձեզ սպառնացել է, մի՛ պատասխանեք: Ձեր արժանապատվությունը դրանից չի տուժելու: Արգելափակեք այդ մարդուն, որ չստանաք նրա նամակները, հաղորդագրությունները ու անմիջապես ասեք մեծահասակներին, ապա ահազանգեք, շուրջօրյա թեժ գիծ ծառայությանը՝ 08 006 1111 (անվճար) հեռախոսահամարով: Հնարավոր է, որ դուք կօգնեք ոչ միայն ձեզ, այլև ուրիշներին: Բայց մինչև զանգելը մի ջնջեք Ձեր ստացած նամակներն ու հաղորդագրությունները: Դրանք կարող են պետք գալ մեղավորին գտնելիս:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բազմաթիվ փորձագետների և սովորական օգտագործողների նպատակն է համացանցը դարձնել անվտանգ, սակայն, ավաղ, այդ երազանքն առայժմ անկատար է:

Գաղտնք չի, որ երեխաները ավելի խոցելի են: Սա առանցքայինսկզբունք էնաև երեխաների պաշտպանության, երեխաների սոցիալական ապահովության մի շարք քաղաքականութ- յունների և օրենսդրության տեսանկյունից աշխարհի տարբեր մասերում գտնվող շատ տարբեր պետություններում: Ինչ վերաբերում է համացանցին, կան մի շարք խնդիրներ երեխաների խոցելիությունների հարցում, որոնք շարունակում են մտահոգիչ լինել: Դրանք ամփոփված են ստորև:

Համացանցը երեխաներին հասանելի է դարձնում տարաբնույթ ապօրինի նյութերը, մասնավորապես՝ երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող պատկերները: Համացանցի միջոցով երեխաները կարող են ենթարկվել հետապնդումների չափահաս ներիկամ անչափահասների կողմից:

Համացանցն ունակ է միջնորդելու և խթանելու ռիսկային սեռական փոխազդեցութ- յուններ երեխաների միջև, այդ թվում՝ խրախուսելով նրանց լուսանկարել իրենց կամ այլոց և տեղադրել դրանք ցանցում («sexting»), ինչը վնասակար լինելուց բացի կարող է լինել ապօրինի:

Համացանցն ունակ է երեխաների համար մատչելի դարձնել այնպիսի կայքեր, որտեղ նրանք կարող են գնել օրենքով արգելված ապրանքներ և ծառայություններ: Համացանցը երեխաներին հասանելի է դառնում իրենց տարիքին անհամապատասխան գովազդներ, համացանցի միջոցով երեխաները կարող են ենթարկվել խարդախության, խաբեբայության և նմանատիպ վտանգների, որոնք տնտեսական բնույթի են:[1]

Հաքերները հաճախ իրականացնում են զանգվածային ավտոմատացված հարձակումներ՝ հնարավորինս մեծ քանակի անձնական տվյալների տիրանալու համար, և յուրաքանչյուրը կարող է դառնալ դրա զոհը:

Ահա կիբեր անվտանգության մի քանի կանոններ, որոնք կօգնեն առցանց հարթակում լինել առավել ապահով.

- սոցիալական ցանցերում օգտագործեք բարդ գաղտնաբառեր՝

[1] https://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/2001-2011/nordzernark_2011.pdf

համադրելովմեծատառերը,փոքրատառերը,
թվանշաններն,սիմվոլները

- անվտանգության նկատառումներից ելնելով հաճախ փոխեք գաղտնաբառը և նույնգաղտնաբառը մի՛ օգտագործեք տարբեր ծրագրերի համար
- սոցիալական ցանցերից կամ տարբեր վեբ-կայքերից օգտվելիս ակտիվացրեք «Two-stepverification» ֆունկցիան
- գաղտնաբառը մի՛ վստահեք ոչ ոքի
- հրաժարվե՛ք անծանոթ մարդկանց ընկերության հայտերն ընդունել
- անհայտ ծագմամբ և կասկած առաջացնող գովազդներ ու հղումներ մի՛ բացեք
- համացանցում մի՛ տարածեք անձնական տեղեկատվություն (անուն, հասցե տարիք, հեռախոսի համար,ծննդյան ամսաթիվ ու օր, էլեկտրոնային հասցե դպրոցի/տան հասցե և այլ փաստեր ձեր մասին)
- մի՛հավատացեք էլեկտրոնային հասցեին, ֆեյսբուքյան կամ այլ սոցիալական կայքերի անձնական էջերին ստացված նամակներին, որտեղ ձեզ շնորհավորում են համերգի/թատրոնի/արտասահման մեկնելու անվճար տոմսեր շահելու, հիանալի կարիերա սկսելու, ժառանգություն ստանալու մասին, և մի՛ շտապեք անցնել հղումով, քանի որ այն հմուտ մտածված տարբերակ է ձեզանից անձնական տվյալներ կամ գումարներ կորզելու և ձեզ հավաքագրելու համար
- յուրաքանչյուր քայլի, զգացողության, հաջողության կամ անհաջողության մասին պետքչէ կիսվել առցանց հարթակներում:
- Այս խորհուրդները ևս կարիք ունեն անընդհատ թարմացման, քանի որ օրականստեղծվող նորանոր տեղեկատվական պաշարների հետ ավելանում են նաև վտանգները:
- Անվտանգության նկատառումներով միշտ պետք լինել իրազեկ ու զգոն:

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Ֆայլերի փոխանակման վտանգներ

- Երաժշտության, տեսանյութերի և այլ ֆայլերի ինտերենետի միջոցով փոխանակումն անձանոթներին կարող են լինել անօրինական, և հնարավորություն տան մուտք գործելու ձեր համակարգիչ և փոխանցել վիրուսներ:

Կիբերհարձակումներ

- Թե՛ երեխաները, թե՛ մեծահասակները կարող են օգտագործել ինտերնետը այլ մարդկանց անհանգստացնելու կամ վախեցնելու համար:

Ինտերնետային խաբեբայություններ

- Էլ.նամակներ, որոնք ուղարկվում են ինտերնետային հանցագործների կողմից, ովքեր փորձում են կորզել անձնական տեղեկատվություն:

Ներխուժում անձնական կյանք

- Երբ երեխան լրացնում է ինտերնետային հարցաթերթիկներ, կարող է փոխանցելտեղեկատվություն իր կամ իր ընտանիքի մասին, որն անցանկալիէ փոխանցել անձանոթներին կամ ինտերնետային ծանոթներին:

Խորամանկություններ

- Էլեկտրոնային նամակներ, որոնք ուղարկվում են ինտերնետային հանցագործների կողմից, ովքեր փորձում են գումար կորզել:

Երեխաներին առցանց անվտանգ պահելը թիվ մեկ առաջնահերթությունն է

Ոչինչ չի փոխարինում ծնողների ներգրավվածությանը, երբ խոսքը վերաբերում է երեխաների առցանց անվտանգությանը: Պարզապես խոսեք ձեր երեխաների հետ, սովորեցրեք նրանց ինքնաբերաբար չսեղմել «այո» կոճակը և չհրահրվել կիբերկռվարարների կամ պոտենցիալ կիբերհանցագործների կողմից: Անվտանգության լուծումները լրացնում են այս աշխատանքը՝ վերահսկելով երեխայի վարքագիծը համացանցում,որն ապահովում է առցանց խաղահրապարակի անվտանգությունը: Տարիքին

ոչ համապատասխան կամ վնասակար օնլայն նյութերից խուսափելու համար կարելի է երեխաների իմացությամբ կիրառել վերահսկման, ֆիլտրման գործիքներ, որոնք հնարավորություն կտան տեսնել նրանց այցելած կայքերը, ինչպես նաև սահմանափակել թե որտեղի՞ց և ի՞նչ սարքերով կարելի է օգտվել համացանցից: Երեխաներին պետք է սովորեցնել, որ համացանցում հանդիպող անծանոթ/տարօրինակ երևույթները և նյութերը (նկար, վիդեո, տեքստ և այլն) անհրաժեշտ է քննարկել ծնողների հետ:

Անպատշաճ բովանդակությամբ կայքերի արգելափակում

Գաղտնիք չէ, որ ոչ բոլոր կայքերն են նախատեսված երեխաների դիտման համար: Երեխան կարող է պատահաբար հայտնվել անպատշաճ բովանդակությամբ կայքում՝ պարզապես փնտրելով որևէ բան որոնման համակարգում կամ սեղմելով ընկերոջ կողմից ուղարկված հղումը:

Ինչպե՞ս կարող եք երեխաներին անվտանգ պահել առցանց և միևնույն ժամանակ անտեղի ճնշում չգործադրել նրանց վրա: Պատասխանը կարող է լինել ծնողական վերահսկողության գործառույթը: Այն հասանելի է և՛ որպես ինքնուրույն լուծում, և՛ որպես անվտանգության համալիրլուծումների մաս: Ծնողական վերահսկողության «անվտանգ որոնում» գործառույթն արգելափակում է անպատշաճ բովանդակությունը, և լուծումների մեծամասնությունը նաև ծնողներին մանրամասն հաշվետվություններ է տրամադրում այն մասին, թե ի՞նչ է անում իրենց երեխան առցանց:

Մի մտեք անծանոթների հետ խոսակցության մեջ

Երեխան ցանկանու՞մ է վերջին առցանց խաղը խաղալ ընկերների հետ՝ զրուցելով նրանց հետ: Բայց այս չատերը պարունակում են նաև կիբերհանցագործներ, ովքեր թաքնվում են ավատարների հետևում՝ փորձելով խաբել երեխաներին անձնական տեղեկությունները բացահայտելու համար: Այս տեղեկատվությունը կարող է օգտագործել ձեր ինքնությունը ՝ գումար գողանալու համար:

Վստահելի կայքերում խաղեր խաղալը կարող է պաշտպանել երեխային: Բայց նույնիսկ այդ դեպքում ձեզ համար դժվար կլինի պաշտպանել երեխային առցանց՝ պարզապես հետևելով, թե ու՞մ հետ են նրանք խոսում առցանց: Կայքերը, որոնք առաջին հայացքից անվնաս են թվում, կարող են պարունակել վնասակար հղումներ, որոնք կվտանգեն ձեր ողջ ցանցի անվտանգությունը:

Մի ներբեռնեք վիրուս

Կիբերհանցագործները գիտեն, որ երեխաները հաճախ համացանցում փնտրում են անվճար ծրագրեր, երաժշտություն և խաղեր: Նրանք նաև գիտեն, որ երեխաները հաճախ վստահում են էլ. փոստի հղումներին և հավելվածներին: Եթե երեխան սեղմի այս հղումներից մեկը, նա կարող է ներբեռնել վիրուս, որը կվտանգի ոչ միայն համակարգչի, այլև ամբողջ ցանցի անվտանգությունը:

Երեխան կարող է դա անել ոչ միտումնավոր և արդեն լուռ ներբեռնվում են նրա համակարգիչ և սպառնում են նրա անվտանգությանը:

Վերահսկեք ձեր երեխայի այցելած կայքերը և ծախսած ժամանակը համացանցում

Երեխաները օգտվում են տարբեր առցանց ծառայություններից, որոնք կարող են ունենալ տարբեր անվտանգության խնդիրներ: Քննարկեք Ձեր երեխաների հետ, թե ի՞նչ է նրանց հետաքրքրում համացանցում և ո՞ր կայքերից են օգտվում:

Եթե նույնիսկ չգիտեք ինչպե՞ս օգտվել՝ հարցրեք նրանց: Երեխաների համար ամենալավ օրինակը հենց դուք եք, օրինակ եթե արգելում եք նրանց օգտվել հեռախոսից ճաշի ժամին, ապա դուք նույնպես խուսափեք վերջինիս կիրառումից: Հեռախոսները և ծրագրային հավելվածները հրաշալի միջավայր են ուսման և ժամանցի համար, սակայն, ինչպես և մեզ շրջապատող աշխարհը, այն կարող է վտանգավոր լինել, եթե համապատասխան կանխարգելիչ քայլեր ձեռնարկված չեն: Իմացե՛ք թե ի՞նչ հավելվածներից և օնլայն ծառայություններից է օգտվում ձեր երեխան: Տեղեկություն ստանալու լավագույն միջոցը նրանց հարցնելն է: Երեխաների հետ պարբերաբար քննարկեք խնդիրները և կիրառեք սահմանափակումներ:

Պաշտպանեք ձեր կարևոր տվյալները

Մի պահեք կարևոր տվյալներ (բանկային քարտի տվյալներ, ծածկագրեր, առողջության վերաբերյալ փաստաթղթեր և այլն) ձեր համակարգիչներում, հեռախոսներում և այլ սարքերում, որոնք միացած են համացանցին: Ջնջեք կարևոր տվյալները, եթե դրանք այլևս անհրաժեշտ չեն: Միշտ օգտագործեք կոդավորում՝ կարևոր տվյալները պահպանելիս և ուղարկելիս: Սակայն կարևոր է հիշել, որ տունը միակ վայրը չէ, որտեղ երեխաները կարող են օգտվել օնլայն ծառայություններից:

ՀԱՄԱՑԱՆՑԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Մի տեղադրեք անձնական տեղեկություններև լուսանկարներ համացանցում

Ավելի ու ավելի հաճախ հարձակվողներն օգտագործում են համացանցը որպես ալիք՝ երեխաներին խաբելու, անձնական տեղեկությունները բացահայտելու համար: Տեղեկացրեք երեխաներին, որ իր կամ նրա ընտանիքի անդամների մասին լուսանկարները կամ տեղեկությունները, որոնք նրանք տեղադրել են համացանցում, չարագործները կարող են օգտագործել և տարածել անձնական շահերի համար:

Մի ներբեռնեք կամ տեղադրեք համացանցից որևէ բան առանց ծնողի թույտվության

Ասացեք երեխաներին, որ վնասակար ֆայլը կարող է թաքնվել խաղի կամ ֆիլմի քողի տակ, որը կարող է վնասել տնային համակարգչին: Ստուգեք այն էջը, որտեղից երեխան պատրաստվում է ինչ-որ բան ներբեռնել վիրուսների համար:

ՄԻ ՇՓՎԵՔ ԵՎ ՄԻ ՀԱՆԴԻՊԵՔ ՆՐԱՆՑ ՀԵՏ, ՈՒՄ ԵՐԲԵՔ ՉԵՔ ՏԵՍԵԼ

Հարձակվողները կապեր են հաստատում սոցիալական ցանցերում, ֆորումներում, զրուցարաններում կամ էլ.հասցեներում, և դա ուղղակի սպառնալիք է երեխաների անվտանգության համար: Հանցագործները հաճախ ներկայանում են որպես զոհի հասակակից, ինչը նրանց համար հեշտացնում է անձամբ հանդիպելը:Շատ կարևոր է երեխաներին բացատրել,որ նրանք չպետք է շփվեն անծանոթ մարդկանց հետ համացանցում և ոչ մի դեպքում չպետք է հանդիպեն նրանց հետ:

ԵՂԵՔ ԱՊԱՀՈՎ ՄՈՒՏՔԻ ԵՎ ԳԱՂՏՆԱԲԱՌԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ,ԳԱՂՏՆԻ ՊԱՀԵՔ ԴՐԱՆՔ ՆՈՒՅՆԻՍԿ ՁԵՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԸՆԿԵՐՆԵՐԻՑ

Ասացեք երեխաներին գաղտնի պահել տեղեկատվությունը ոչ միայն օտարներից, այլև ընկերներից: Գաղտնաբառերը և մուտքերը կարող են օգտագործվել ցանկացած անձի անձնական շահերի համար: Տեղեկացրեք երեխաներին խաբեության ամենատարածված տեսակների մասին: Օրինակ՝ գովազդ ուղարկելու համար ուրիշի էջը կամ փոստարկղը օգտագործելու մասին:

ԵՂԵՔ ՔԱՂԱՔԱՎԱՐԻ, ՄԻ ՎԻՐԱՎՈՐԵՔՀԱՄԱՑԱՆՑԻԱՅԼ ՕԳՏՎՈՂՆԵՐԻՆ

Բացատրեք երեխաներին, որ համացանցը ահաբեկման, վիրավորանքի, սպառնալիքների կամ բամբասանքների տեղ չէ: Հարցրեք երեխաներին այն մասին,ինչ են

տեսել համացանցում,հետևեք,թե ինչ են նրանք անում այնտեղ,ուշադրություն դարձրեք նրանց տրամադրությանը:Փորձեք ստիպել երեխաներին խոսել համացանցում նրանց հետ պատահած բոլոր անսովոր փորձերի մասին:

ԵԹԵ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ՎՃԱՐԵԼ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ, ՆԱԽ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵՔ ՁԵՐ ԾՆՈՂՆԵՐԻՑ

Բանկային քարտերի տվյալները շատ կարևոր բան են,և երեխաները պետք է տեղյակ լինեն դրա մասին: Քարտի տվյալները օգտագործելուց առաջ երեխաները պետք է տեղեկացնեն իրենց ծնողներին: Ասացեք երեխաներին,որ եթե ուշադիր չլինեն,խաբեբաները կարող են անօրինական կերպով վերցնել գումարը: Ստուգեք այն կայքը,որն առաջարկում է գնումներ կատարել: Այսօր որոշ էջերում հատուկ վճարային մուտքեր են կատարվել բանկի տվյալները մուտքագրելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՁԵՐ ՏԵՍԱԽՑԻԿԸ ՄԻԱՅՆ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ԶՐՈՒՑԵԼԻՍ

Համացանցային հանցագործները փորձում են կապ հաստատել պոտենցիալ զոհերի հետ առկա բոլոր միջոցներով,այդ թվում՝ տեսախցիկի միջոցով:Փորձեք տեղյակ լինել համացանցում երեխաների որևէ մեկի հետ շփվելու մանրամասներին:

Եթե երեխան ագրեսիայի զոհ է դարձել,օգնեք նրան ելք գտնել այս իրավիճակից: Բացատրեք, որ երբեք չպետք է բարի արձագանքել վիրավորական խոսքերին: Եթե չեք կարող խնդիրը լուծել խաղաղ ճանապարհով,ապա պետք է հեռանաք ռեսուրսից և այնտեղից ջնջեք ձեր տվյալները: Բացի այդ,այսօր գրեթե բոլոր կայքերն ունեն մոդերատորներ՝ մարդիկ,ովքեր հետևում են այն ամենին,ինչ գրում են օգտվողները: Նման անձը կարող է բողոքել օրինախախտից, որի պրոֆիլն այնուհետև կարգելափակվի: Եթե մոդերատորն ինչ-ինչ պատճառներով չի կարող դա անել,դիմեք կայքի ադմինիստրացիային և պահանջեք, որ ագրեսորի էջը հեռացվի: Օգտագործեք ժամանակակից ծրագրեր,որոնք զտում են վեբկայքի բովանդակությունը և օգնում վերահսկել, թե որտեղ եք այցելում համացանցում:

Եվ ամենակարևորը՝ սա քննարկեք երեխաների հետ: Նրանք պետք է հասկանան նման արգելքների անհրաժեշտությունը:

Ո՞վ կարող է օգնել երեխաներին համացանցում պաշտպանված լինել

Երեխաները համացանցում բախվում են բազմաթիվ ռիսկերի ու մարտահրավերների: Անձնական տվյալների գաղտնիություն, կեղծ լուրեր, բռնության և ոչ պատշաճ բովանդակություն պարունակող նյութեր, սեռական ոտնձգության փորձեր և բազմաթիվ

նմանատիպ խնդիրներ ամեն օր սպառնում են օգտատերերին:

Հայաստանի օպերատորների միությունն այս խնդիրները պահում է իր ուշադրության կենտրոնում և հեռահաղորդակցության միջազգային միության հետ համատեղ իրականացնում երեխաների առցանց անվտանգությանն ուղղված մի շարք ծրագրեր: Աշխարհում համացանցի յուրաքանչյուր երրորդ օգտատերը երեխա է և այն անսահմանորեն հարուստ ռեսուրս է երեխաների համար: Հնարավորությունները շատ են ինչպես սովորելու, այնպես էլ ընկերների, ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապ հաստատելու համար: Այս ամենի հետ մեկտեղ այն դարձել է շատ վտանգավոր: Երեխաները բախվում են առցանց բազմաթիվ ռիսկերիև մարտահրավերների,ինչպիսիք են՝ անձնական տվյալների գաղտնիությունը, կեղծ լուրերը, բռնության և ոչ պատշաճ բովանդակություն պարունակող նյութերը, սեռական ոտնձգության փորձերը և բազմաթիվ այլ նմանատիպ խնդիրներ: Բացի այդ, Քովիդ-19 գլոբալ համաճարակի պատճառով երեխաները ստիպված եղան շատ ժամանակ անցկացնել առցանց, մինչդեռ ծնողներից շատերը չեն կարողանում վերահսկել երեխաների գործունեությունը համացանցում՝ ծանոթացնել վտանգներին, ինչպես նաև սովորեցնել նրանց այդ վտանգներից խուսափելու և պաշտպանվելու մեթոդներ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ

Ծնողական ժողով

Թեման՝ Ապահով համացանց

Նպատակը՝ ● Համացանցի անվտանգության կանոնների ուսուցանում:

● Ծնողների իրազեկության մակարդակի բարձրացում:

● Վիրտուալ աշխարհում ճիշտ կողմնորոշվելու ընդունակություններիձևավորում:

Օգտագործվող մեթոդներ և հնարներ՝

Մտագրոհ, բանավեճ, զրույց, համառոտ դասախոսություն, ցուցադրություն:

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ՝

Քարտեր, համակարգիչ /ինտերնետ կապով/, պրոյեկտոր և էկրան կամ հեռուստացույց:

Մասնակիցներ՝

Ծնողներ, ուսուցիչներ, ինֆորմատիկայի ուսուցիչ

Դասը սկսել քարտային աշխատանքով, որի նպատակը համացանցի վերաբերյալ ծնողների իրազեկվածությունը ստուգելն է:

Քարտային աշխատանք

Ի՞նչ գիտեմ ես համացանցի մասին

Ծնողի ԱԱՀ.....

1.Հաճա՞խ եք օգտվում համացանցից:

2.Համացանցը օգնու՞մ է Ձեզ, թե՝ խանգարում է, խլելով ձեր ժամանակը:

3.Ինչպիսի ՞տնային կանոններ կարող եք սահմանել համացանցի օգտագործման համար:

4.Ունե՞ք համացանցային կախվածություն:

5.Արդյո՞ք անհանգստացել եք, երբ Ձեր երեխան երկար է նստել համակարգչի առաջ:

6.Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան ունենում գլխացավ,քնի խանգարում, մեկուսացում և այլառողջական խնդրներ:

Ինչպե՞ս կվարվեք, եթե Ձեր երեխան օգտվի համացանցից և հայտնվի որևէ խնդրահարույց իրավիճակում:

Այսպիսով

1. Ժամանակ գտեք պարզելու, թե ինչպես են ձեր երեխաները անցկացնում իրենց ժամանակը ցանցում և խնդրեք նրանց ցույց տալ, թե ինչպես են հաղորդակցվում իրենց ընկերների հետ: Սովորեցրեք նրանց ապահովել իրենց առցանց մասնավորությունը (մասնավոր կյանքի գաղտնիությունը)՝-ստեղծելով ապահով անձնական էջեր.
2. իրենց, ընտանիքի,տան,դպրոցի և այլ նկարներ տեղադրելուց առաջ միշտ հարցնել ծնողների թույլտվությունը,- անձնական տեղեկությունները, ինչպես նաև հեռախոսի համարը, հասցեն, դպրոցի համարը, սպորտային թիմը և այլն, փոխանակել միայն այն մարդկանց հետ, ում ճանաչում են իրական կյանքում:
3. Տեղադրեք ընտանեկան համակարգիչը այնպիսի տեղում, որ կարողանաք վերահսկել նրանց առցանցային զբաղմունքները:
4. Միասին համոզվեք,որ գիտեք,ընկերության առաջարկները մերժելու և արգելափակելուգործառույթները
5. Միասին համոզվեք,որ գիտեք,անվտանգության և ահազանգելու գործառույթները, որ առկաեն օգտագործվող կայքերում :
6. Ձեռք բերեք երեխաների վստահությունը, քաջալերեք նրանց խոսել ձեզ հետ իրենց սխալների մասին և միասին փնտրեք լուծումները: Սխալները սովորելու անբաժան մաս ենկազմում :
7. Համացանցում անցանկալի բովանդակության հանդիպելիս, զեկուցեք ազգային համացանցային թեժ գծին / http://www.safe.am INSAFE/
8. Հնարավորության դեպքում նստեք երեխաների կողքին, երբ նրանք նավարկում են համացանցում: Դա լավագույն ձևն է քննարկելու և վստահություն նվաճելու համար:Միասին սովորելը դարձրեք ձեր նպատակը :
9. Հիշեք, որ անվտանգության կանոնները ձեր ու ձեր երեխաների համար են: Քաջալերեքնրանց ասել այն ամենի մասին, ինչն իրենց տարօրինակ է թվում :



Աղբյուրը՝ Ծնողական ուղեցույց / http://safe.am/esafetykit/downloads/parentsFull.pdf/

Ծնողներին ծանոթացնել Ծնողական ուղեցույցի հետ և խնդրել, որպեսզի մանրամասն կարդանա ծանոթանան: Էլեկտրոնային տարբերակ՝ http://safe.am/esafetykit/downloads/parentsFull.pdf/ Ինչպես նաև օգտվել հետևյալ օգտակար հղումներից http://safe.am/ar/faq.html http://safe.am/ar/parents.html http://safe.am/ar/children.html

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ապահով համացանց» թեմայի ուսումնասիրությունը վերջին տարիների ընթացքում ոչ միայն անհրաժեշտ, այլ պարտադիր է ուսումնասիրել դպրոցում՝ աշակերների և ծնողների մասնակցությամբ: Այն իրականացնել խաղերի միջոցով, վերլուծությունների և փաստերի համադրմամբ: Քանի որ մենք շրջապատված ենք նաև կեղծ ինֆորմացիայով և կեղծ կայքերով, որոնք գումար աշխատելու նպատակով պատրաստ են ցանկացած քայլի, ապա մենք էլ պեք է կրթենք մեդիագրագետ սերունդ, որը վերլուծում է քննադատաբար, կարողանում է ստուգել փաստերը և օգնել ընկերներին կոմնորոշվելու ինֆորմացիոն տեղատարափի մեջ:

Հետազոտությունը նպաստեց աշակերտների մոտ ձևավորել՝

- գիտելիք ապահով համացանցի մասին
- գիտելիք համացանցից օգտվելու անվտանգության հիմնական կանոնների մասին:
- գիտելիք, որի միջոցով կորող են խուսափել մեդիայի բացասական ազդեցությունից:

Հետազոտությունը նպաստեց աշակերտների մոտ զարգացնել՝

- քննադատական մտածողություն
- լեզվական կարողունակություններ
- մեդիա և թվային կարողունակություններ
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արտակ Հարությունյան, Վահե Երիցյան «Անվտանգ համացանց», ©Ասողիկ, 2011-64 էջ
2. Լուսինե Գրիգորյան «Կասկածիր, համեմատիր, ճշտիր. ինչպե՞ս բացահայտել և ստուգել կեղծ տեղեկությունները» © Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, *2019*թ
3. http://safe.am/ar/about.htm
4. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%B8%D5%BE_%D5%80%4.D5%A1%D5%B4%D5%A1%D6%81%D5%A1%D5%B6%D6%81
5. http://teenslive.am/communication/hamacanci-apahov-ogtagortcman-10-kanonnereh
6. https://www.youtube.com/watch?v=_EJ7u4g26VE
7. https://www.youtube.com/watch?v=rr6H1UwRcN0&list=PLYMtfnOzqv24Vjn2G7DkyYeViJVG99gGV &index=6